

ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿՈՒԱՅ ՈԳԻՆ

(Շարունակութիւն և վերջ, տես թիւ 8.)

Բայց եթէ մանուկը երեք տարեկան հասակի մէջ մեռնում է, չէ՞ որ էդ էլ ազգային անտեսի աչքով զուտ կորուստ է: Շաբաթներով ամիսներով տարաբախտ մայրը երկիւղալից ցերեկներ, անքուն գիշերներ մանկան անկողնու մօտ անցուցել է—սա զուտ տընտեսական կորուստ է: Այո՛ ճշմարիտ է, որ մի անգառնալի կորուստ է. բայց որչափ մօր բարոյական խորութիւնը ընդարձակուել է, սրպիսի բարոյական զօրութիւն նորա մէջ շարժուել է, որովհետեւ որ կեանքի խափուսիկ խաղից սթափուած՝ այս առաջին անգամ ողբալի կերպով վախճանականութեան դռն առաջեւ կանգնեցաւ. այս բանը վիճակագրողը իր հաշիւներին մէջ չէ թւում: Այո՛, մահիցն էլ կեանք է ծագում բարոյական զօրութեանց համար. մարդս սովորում է այն եւս տանել, կրել, ինչ որ անհրաժեշտ է Աստուծոյ կամքով, բայց անհաճոյ է մարդոյ կամքին: Ինչպէս որ ողբերգութիւնը ամենաբարձր արուեստ է, նոյնպէս և վիշտը մարդկային կամ ազգային կեանքի մէջ այն աղբիւրն է, որ աեղից որ զօրութիւն է ծագում ներքին հոգեկան խորասուզութեան համար:

Իսկ ի՞նչ ասենք ծերութեան համար: Ես չեմ խօսի նոցա մասին, որոնք իրանց անջինջ գործքերով ակն յայտնի հերքում են փորձառութեան այն կարծիքը, իբր թէ ծերութիւնը նշան է անկարողութեան. ես չեմ խօսի, թէ ինչպէս երբեմն ծերութիւնը դարձեալ կարող է մի բարձր և նշանուոր գործք

յառաջացնել. ես կխօսեմ միայն նորա գոյութեան, նորա կեանքի մասին: Արդեօք մի ընտանեաց մէջ մի պապ կամ մի տատ նոյն այն անարգասաւոր ծերութեան մէջ ապրում է կամ չի ապրում, նշանաւոր զանազանութիւն չէ՞ յայտնում ամբողջ ընտանեաց, ամբողջ սերնդի, ամբողջ քաղաքի կամ ամբողջ ազգի բարոյական կացութեան մէջ:—Իսկապէս եթէ Նախախնամութիւնը մի ազգին հովանաւորում է, այն ժամանակ նորա բարի և մեծ մարդկերանցը երկար կեանք է պարգեւում. սոքա ազգի պարծանք են ոչ միայն նուրանով, ինչ որ դեռ էլի բարի և մեծ կատարել կարող են, բայց նորանով, ինչ որ նոքա երիտասարդներից վայելում են: Նոքա ընդունում և վայելում են՝ աննախանձ յարգանք, շնորհակալ պատկառանք, որ հասակալից աշխատակիցների մէջ քիչ է երեւում: Իսկ պատկառանքի զգացումը, եթէ մի ազգի մէջ արթուն է, է մի բարոյական զօրութիւն, որ շատ տնտեսական գանձերից բարձր է:—Եւ այս օրինակը մեզ բաւական լինի:

Կարճ, մեր բոլոր նկատողութիւններով կամեցանք ակնարկել մեր երկիւղը, թէ մեր երիտասարդութիւնը կարծես մի առանձին միտութիւն է ցոյց տալիս ըմբռնել այժմեան գիտութիւնը նկարագրած միակողմանութեամբ և այդպէս է ձգտում ազգի վրայ ազդեցութիւն ունենալ: Մեր պահանջը ուրիշ է, մենք ցանկանում ենք, որ ազգի բարուց միջուկը կըլթի և ազնուանայ: Մեր մեծ և փոքր կրթողները մի բան չպէտք է մոռանան, որչափ որ հարկաւոր էլ լինի իրական փոփոխութիւնը, որչափ որ հարկաւոր և նշանաւոր էլ լինի կեանքի նիւթական ճոխութիւնը, որչափ որ մեր պարտքն է աշխատել, որ ծանրաբեռ

Նկատելով և կարօտեալները զովանան, որ նոցա կեանքը ազատութեամբ շարժուի, նոքա ազատութեամբ շունչ քաշեն և արգելք չտեսնեն նիւթական հոգեւորի ճնշողութիւնից, — բայց դարձեալ և դարձեալ նախ և առաջ հարկաւոր է, որ ազգի մէջ հոգեկան զօրութիւններ և ուրեմն նոցանից ծագած հոգեկան ուրախութիւններ եւ բաւականութիւններ զարթնեն. մարդըս պիտի իմանայ ոչ միայն, թէ նիւթական կողմերից որքան շատ կամ որքան քիչ իր կացութիւնը լաւացաւ, այլ և իր գործքերի ազատութեան մէջ կենաց լիակատար բաւականութիւնը գտնել: Նա պէտք է իմանայ, թէ ինչ որ ինքը գործում է իր բարձր և ստորին վիճակի մէջ այն է և իր վսեմութիւնը, այն է և իր սրտի ուրախութիւնը: Նւ արդարեւ, մենք երբեք չենք խոստովանել, իբրեւ թէ նիւթական պայմաններն են մարդուս բախտը և երանութիւնը, մենք ամենքս — որովհետեւ ընկերական խնդիրները բնաւ չը պէտք է թողնենք որ սա կամ նա լուծէ — մենք ամենքս, ասում եմ, միշտ և անդադար բանիւ և գործով պէտք է ապացուցանենք, թէ նախ և առաջ հոգեւոր ազնուութիւնը, սրտի կենդանութիւնը կարող է տալ ճշմարիտ բաւականութիւն, որը անտարակոյս այնքան նիւթական կացութեան բարեկարգելուց կախեալ չէ, ինչպէս որ ընդհանրապէս շատերը տրամադիր են կարծելու:

Կեանքն ունի իր ուրախութիւնները, այս զգում է և բարձր եւ ցած աստիճանի վրայ կոցած մարդը: Բայց կեանքի ուրախութիւնը վայելելու համար հարկաւոր է ոչ միայն նիւթական, այլ և հոգեկան հարստութիւն: Մեր անբարեկարգ դպրոցները մեզ շատ թշուառ կրթութիւն են տալիս, որով

հետեւ այդ ճշմարտութիւնը չեն ուսուցանում. մեր մամուլը ոչինչով բարձր չէ դպրոցներից, սա էլ պակասով լրացնում է, միշտ թերակիրթ երիտասարդի մտքերը գրգռուած դրութեան մէջ պահելով, իր քարոզած կեղծ նոր մտքերի միջնորդութեամբ: Բացարձակ պիտի խօսեմ, թէ մեր մամուլը ընկերական խնդիրները բարձրացնելով միշտ կիսատ միջոցներ է ընտրել: Այժմ մեր կողմից մենք չենք կամենալ այդ թերակիրթ և աղքատ երիտասարդներին մխիթարել ապագայ հանդերձեալ աշխարհի յոյսերով, ոչ էլ կարող ենք խորհուրդ տալ, որ մուռնան կեանքի ուրախութիւնները և առնուաբանութիւնները: Բայց մենք կամենում ենք, որ դոքա չէ թէ միայն իրաւունքները ձեռք բերեն ընկերութեան մէջ, ինչպէս որ մամուլը երբեմն քարոզում է, բայց և պարտաւորութիւններ սովորեն: Մենք կարծում ենք, որ ամենաբարձր պարգեւը, որ մենք մարդուս կարող ենք տալ, չէ թէ միայն նոր իրաւունքներ ուսուցանելն է, այլ որպէս զի նա յարգելի լինի և վսեմութիւն ստանայ, նորա վրայ պէտք է նոր պարտաւորութիւններ դնենք: Նոր պարտաւորութիւնները կատարելով միայն մարդս ստանում է նոր զօրութիւն եւ նոր բաւականութիւն: Քանի որ այս չենք սովորեցնում մեր երիտասարդներին, նոքա են և կը մնան ազգի ցեցեր, չըմալիկ դատարկագործներ:

Այս վերքը բուժելու համար էլ, այս նոր նպատակին հասնելու համար էլ առաջին միջոցը դարձեալ նայն գաղտնիքականութիւնն է, որի վրայ որ վերք խօսեցանք, և որը որ մեր մէջ կենդանացնելը մեր ամենուս պարտքն է. յոյս ունենանք որ մեր նոր սերունդը, որը որ կաշուած է մեզ լուսաւոր

բութիւն բերելու արեւմուտքից՝ կը
 ձգտի իրա մէջ մարդկայնութեան բու-
 լոր հանգամանքների կատարելալ ժո-
 ղովումն հաստատել, որ մեր նոր սե-
 բունդը հեռու գոյով այն լոկ բաժա-
 նումից, հատ ու կտոր գիտութիւնից,
 իր միտքը կ'ուղղէ տիեզերքի ամբող-
 ջութեան վրայ, և կը նկատէ չէ թէ
 միայն հատ հատ երեւոյթները, այլ և
 ամբողջութեան օրէնքների մէջ բնու-
 թեան բուն պատկերը կը ճանաչէ. որ
 մեր նոր սերունդը իր աչքը կը դար-
 ձնէ մարդկային քաղաքակրթութեան
 զարգացման լիութիւնը բմբռնելու հա-
 մար, իր միտքը կ'ընդարձակէ՝ ամբողջ
 մարդկայիններսը թափանցելու համար
 և կզգայ իր մէջ մարդկային պատմու-
 թեան սրտի բաբախումը: Ամենայն
 ազգի պատմութիւնը, և մեր հայկա-
 կան պատմութիւնը օրինակներով ցոյց
 են տալիս, թէ ինչպէս մարդը երբեմն
 իր օրնատօրական կեանքից տարբեր է
 երեւում, եթէ նորա սիրտը բացէ ընդ-
 հանրութեան համար, ամբողջութեան
 համար, ազգային կեանքի համար: Այս-
 պիսի ընդհանրական ոգի մենք ցոյց
 ենք տուել այնպիսի ժամանակներում,
 երբ մեր ազգը խոր տգիտութեան մէջ
 և անյաջող հանգամանքների մէջ է ե-
 ղել: Գուցէ երբեք մեր ազգը քաղա-
 քականապէս այնպէս հանգիստ չի ե-
 ղել, ինչպէս այժմ, իսկ անտարակոյս
 երբեք այնքան միջոց չէ ունեցել կրթ-
 թութեան համար, ինչպէս այժմ: Բայց
 զարմանալին այն է, որ գուցէ երբեք
 մեր ազգը այնպէս քայքայուած, այն-
 պէս բարոյապէս ընկած չէ եղել, ինչ-
 պէս այժմ: Արդեօք մեր նոր սերունդը
 այս տեղ իր բուն պաշտօնը կը ճանա-
 չէ:

Ս. Մանթինեանց:

ԱՆԳՂԻԱԿԱՆ ԾԱՂԿԱՔԱՂ

Սողոմոնի Տաճարին ստորագրութիւնը

Ընդհանուր տեսութեամբ Սողո-
 մոնի Տաճարը Մովսիսի վկայութեան
 խորանին ընդարձակագոյն ձեւը ունէր,
 քարաշէն և ամրոցի մը նման պատե-
 րազմական պատնէշներով: Որովհետեւ
 Մովսիսական օրէնքը եղի, ոչխարի և
 այծի նման կենդանեաց արիւնհանգ
 պատարագներէ կը բաղկանայր, ուստի
 Սողոմոնի Տաճարն ալ մէկ ընդարձակ
 քառանկիւն գաւթի մը պէտք ունէր
 յատկապէս զոհերը պահելու և մոր-
 թելու համար: Այս զոհերուն գլուխ-
 ները քարայտակին վրայ պնդապէս
 հաստատուած երկաթէ կարգ մը օղակ-
 ներուն կը խոնարհեցնէին, և պատա-
 րագին ծառայող քահանային պարոթն
 էր զանոնք իւր ձեռքը ղեկուէլ: Այն
 Սողոմոնի ատենները քահանայ մը իւր
 հանդերձին թեւերը վեր հաւքած մը
 սովաճառի մը խիստ նման գործեր ու-
 նեցող մէկ անձ մը էր: Այս գաւթիթը
 միմիայն ղեկման գործոյն մէջ յարաբե-
 րութիւն ունեցողները կրնային մաները
 Պատեքի նման մեծ տօներու ատեն զո-
 հերը այնչափ բազմաթիւ կ'ըլլային, որ
 այս գաւթիթը չէր բաւէր: Երուսաղէմի
 նման ջերմ կլիմայի մը մէջ տաճար մը,
 ուր պատարագի համար զոհերու զե-
 նումը հանապազօրեայ գործողութիւն
 մի էր, ուրիշ որ և իցէ հարկաւորու-
 թէնէ զատ, լոկ քարայտակին վրայէն
 արիւնը սրբելու և զոհերը ու պատա-
 րագին ուրիշ մասերը լուալու կամ
 մաքրելու համար առատ ջուրի մատա-
 կարարութեան պէտք ունէր:

Այս պատճառիւ համար Սողոմոն
 պղնձէ ընդարձակ աւազան մը շինել
 տուաւ կամ ձուլեալ իոնք մը, որ Անգ-
 ղիական չափով գրեթէ երկու հազար